

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵՆԻՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2025

I. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I.	ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	2
II.	ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ	3
III.	ԱՄՓՈՓԱԳԻՐ	5
IV.	ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	6
V.	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ 7	
VI.	ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	8
VII.	ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐԸ	15
VIII.	ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ	28
IX.	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	30

II. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը¹	Հաշվեքննիչ պալատի 2024 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 154-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե:
Հաշվեքննության առարկան	2024 թվականի պետական բյուջեի տարեկան մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության առարկայի չափանիշները	«ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք, «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենք, «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, «Գնումների մասին» ՀՀ օրենք, ՀՀ հարկային օրենսգիրք, ՀՀ աշխատանքային օրենսգիրք, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենք, «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշում և այլ իրավական ակտեր:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2024 թվականի հունվարի 1-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2025 թվականի հունվարի 13-ից մինչև 2025 թվականի ապրիլի 30-ը ներառյալ:
Հաշվեքննության մեթոդաբանությունը²	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, ֆինանսական և համապատաս-

¹ «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն սույն Ընթացիկ եզրակացությունն օգտագործվում է ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը կազմելու համար:

² «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Հաշվեքննիչ պալատի հաշվեքննությունների մեթոդաբանությունները հիմնված են Բարձրագույն հաշվեքննիչ մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) սկզբունքների, ստանդարտների ու ուղեցույցների վրա:

խանության հաշվեքննությունների մեթոդաբանությունների համաձայն:

Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն:

**Հաշվեքննությունն
իրականացրած
կառուցվածքային
ստորաբաժանում**

Հաշվեքննությունն իրականացվել է Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Հակոբ Միհրանյանը:

III. ԱՄՓՈՓԱԳԻՐ

«Կուտակային հատկացումներ մասնակցի կենսաթոշակային հաշվին», «Հիպոթեքային վարկի վճարված տոկոսների գումարների վերադարձ» միջոցառումների շրջանակներում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կողմից իրականացվող գործընթացների գերակշիռ մասն իրականացվում է ինքնաշխատ համակարգերի կիրառմամբ՝ նվազեցնելով մարդկային սխալի գործոնով պայմանավորված ռիսկերը:

Հարկ վճարողների կողմից եկամտային հարկի և սոցիալական վճարի հարկային հաշվարկները ձևավորելու, դրանք լրացնելու, էլեկտրոնային ստորագրությամբ ներկայացված փաստաթղթերի վավերականությունը ստուգելու, հարկային հաշվարկն ընդունելու կամ մերժելու և դրանից հետո անձնական հաշվի քարտերում հարկային պարտավորությունների հաշվարկման գործընթացները, ինչպես նաև հարկ վճարողի անձնական հաշվի քարտի վարումը, հարկային պարտավորությունների հաշվարկը, կատարված մարումների հաշվառումը, ժամկետանց պարտավորությունների մասով տույժերի, տուգանքների հաշվարկը և դրանց արտացոլումը հարկ վճարողի անձնական հաշվի քարտում իրականացվում են ինքնաշխատ համակարգի միջոցով՝ նվազեցնելով մարդկային սխալի գործոնով պայմանավորված ռիսկերը: Յուրաքանչյուր հարկ վճարողի մասով հավաքագրված եկամտային հարկի՝ հաշտվություններում արտացոլման գործընթացը նույնպես իրականացվում է ինքնաշխատ համակարգերի կիրառմամբ:

Կոմիտեի կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ ամսական տեղեկատվության, Կոմիտեի գործունեության եռամսյակային համառոտագրերի, ինչպես նաև Կոմիտեի գործունեության տարեկան հաշվետվությունը Կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքում հիմնականում հրապարակվել են գործող իրավական ակտերով սահմանված ժամկետների պահպանմամբ:

IV. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ³

- Հաշվեքննության իրականացման համար Կոմիտեից հայցվել և ստացվել է բավարար տեղեկատվություն:
- Հաշվեքննության արդյունքում խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել:
- ՀՀ պետական եկամուտների կոմիտեում 2024 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության արդյունքներով արձանագրված անհամապատասխանությունները, այլ փաստերը և առաջարկությունները ներկայացված են սույն ընթացիկ եզրակացության 6-րդ, 7-րդ և 9-րդ բաժիններում:

³ Հաշվեքննությունը նպատակ է հետապնդել հաշվեքննության առարկային վերաբերելի տեղեկատվության ներկայացուցչական ընտրանքով (100%-ից փոքր) ձեռք բերել բավարար, համապատասխան հաշվեքննության ապացույցներ, որոնց կուտակմամբ ձևավորվելու է պետական բյուջեի տարեկան կատարման վերաբերյալ եզրակացությունը՝ ներառյալ հաշվեքննության կարծիքը, որով պետք է արտահայտվի ողջամիտ (ոչ բացարձակ) հավաստիացում առ այն, թե պետական բյուջեի կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվությունը, բոլոր էական առումներով, ներկայացնում է արդյոք ՀՀ պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության ճշմարիտ ու իրական պատկերը:

Վ. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեին (այսուհետ՝ Կոմիտե)՝ որպես ծրագրերի կատարողի, 2024 թվականի պետական բյուջեի տարեկան պլանով նախատեսվել է 313,005,533.50 հազ. դրամի ծախս, որն ավելացել է 24,220,977.98 հազ. դրամով: Ծշտված պլանը կազմել է 337,226,511.48 հազ. դրամ, իսկ ֆինանսավորումը՝ 331,183,524.26 հազ. դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է՝ 330,840,083.63 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 332,204,567.21 հազ. դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում ճշտված պլանի նկատմամբ դրամարկղային ծախսը կազմել է 98.11%, ըստ ծրագրերի կատարողականների ցուցանիշները ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1 - Կոմիտեի 2024 թվականի պետական բյուջեի տարեկան ցուցանիշները (հազ. դրամ)

Ծրագիր		Տարվա պլան	Տարվա ճշտված պլան	Փաստ	Փաստացի ծախս
Ընդամենը		313,005,533.50	337,226,511.48	330,840,083.63	332,320,782.53
1015	Սոցիալական փաթեթների ապահովում	-	194,376.00	177,284.51	177,284.51
1023	Հարկային և մաքսային ծառայություններ	37,438,733.50	39,660,832.38	34,139,975.07	35,679,484.26
1102	Կենսաթոշակային ապահովություն	152,266,800.00	182,080,707.00	181,945,477.03	181,945,477.03
1205	Սոցիալական ապահովություն	51,300,000.00	45,696,506.20	45,696,506.16	45,696,506.16
1235	Թվային փոխակերպման գործընթացի իրականացում	-	1,005,570.00	292,321.00	233,500.00
1239	Հիպոթեքային վարկի վճարված տոկոսների գումարի վերադարձ	72,000,000.00	68,588,519.90	68,588,519.86	68,588,519.86

VI. ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. 1205-12009 «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՅՈՒՄ» ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

1.1. Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 2-ի ««Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 86-Ն որոշման Հավելված 4-ով սահմանված կարգի՝ 3-րդ, 4-րդ, 4.1-րդ և 8-րդ կետերի պահանջների կատարման նկատմամբ:

ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 2-ի ««Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 86-Ն որոշման Հավելված 4-ում ներկայացված կարգի.

- 3-րդ կետի համաձայն՝ հարկային մարմինը եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկը (բացառությամբ պաշտպանության, ներքին գործերի, ազգային անվտանգության, քրեակատարողական կամ դատական ակտերի հարկադիր կատարման բնագավառների պետական լիազոր մարմինների) ստանալուց հետո առանձնացնում է այն աշխատողների թիվը, որոնց համար տվյալ ամսում հաշվեգրված (աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման քաղաքացիաիրավական պայմանագրերի դեպքում վճարված) են եկամուտներ: Եթե այդ աշխատողների դրոշմանիշային վճարների գումարն ամբողջությամբ փոխանցված է համապատասխան գանձապետական հաշվեհամարին, ապա հարկային մարմինն այդ գումարի վճարման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում սույն կետում նշված աշխատողների ցուցակը՝ համաձայն N 1 ձևի, տրամադրում է հատուցման հիմնադրամին:
- 4-րդ կետի համաձայն՝ աշխատանքային կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման քաղաքացիաիրավական պայմանագրերով հարկային գործակալ չհամարվող անձանցից եկամուտներ ստացող ֆիզիկական անձանց կողմից հարկային մարմին ներկայացված եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական պարզեցված հաշվարկի հիման վրա հարկային մարմինը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար առանձնացնում է դրոշմանիշային վճարների գումարն ամբողջությամբ փոխանցած անձանց և այդ գումարի վճարման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում սույն կետում նշված ֆիզիկական անձանց

ցուցակը՝ կազմված սույն կարգի N 1 ձևի համաձայն, տրամադրում է հատուցման հիմնադրամին:

- 4.1-րդ կետի համաձայն՝ հարկային գործակալ չհանդիսացողից եկամուտ ստացող անհատ ձեռնարկատեր և նույն չհանդիսացող ֆիզիկական անձանց եկամտային հարկի տարեկան հաշվարկի հիման վրա հարկային մարմինը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար առանձնացնում է դրոշմանիշային վճարների գումարն ամբողջությամբ փոխանցած հարկային գործակալ չհանդիսացողից եկամուտ ստացող անհատ ձեռնարկատեր և նույն չհանդիսացող ֆիզիկական անձանց և այդ գումարի վճարման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում սույն կետում նշված դրոշմանիշային վճարներն ինքնուրույն վճարողների ցուցակը՝ կազմված սույն կարգի N 1 ձևի համաձայն, տրամադրում է հատուցման հիմնադրամին:
- 8-րդ կետի համաձայն՝ հարկային մարմինը դրոշմանիշային վճարներ կատարող անձանց կողմից (օրենքով սահմանված դեպքերում՝ հարկային գործակալի միջոցով) դրոշմանիշային վճարների ամբողջ գումարը վճարելուց և սույն կարգի 3-րդ, 4-րդ, 4.1-ին, 5-րդ և 6-րդ կետերով սահմանված ցուցակները կազմելուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, ֆինանսների ոլորտում ՀՀ կառավարության լիազորված մարմին է ներկայացնում դրոշմանիշային վճարները հատուցման հիմնադրամին փոխանցելու վերաբերյալ հանձնարարական՝ համաձայն N 2 ձևի:

2024 թվականի ընթացքում Կոմիտեի կողմից կազմվել են դրոշմանիշային վճարների փոխանցման 64 հանձնարարականներ⁴, որոնցից 8-ը կազմվել, իսկ համապատասխան գումարները (5,362,091.9 հազ. դրամ) փոխանցվել են՝ ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 2-ի N 86-Ն որոշմամբ սահմանված ժամկետներից մինչև 9 օր ուշացումներով:

Վերը նշվածի արդյունքում չեն պահպանվել ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 2-ի ««Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 86-Ն որոշմամբ սահմանված և Հավելված 4-ով ներկայացված կարգի՝ 3-րդ, 4-րդ, 4.1-րդ և 8-րդ կետերի պահանջները:

⁴ Դրոշմանիշային վճարներ կատարող անձանց կողմից դրոշմանիշային վճարների ամբողջ գումարը վճարվել է, սակայն որոշ դեպքերում դրոշմանիշային վճարները Հիմնադրամին փոխանցվել են ուշացումներով:

Կոմիտեի արձագանքը

Կոմիտեն հաշվեքննողի կողմից ներկայացված 1205-12009 «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցում» միջոցառման վերաբերյալ հայտնում է, որ հինգ աշխատանքային օրվա ընթացքում դրոշմանիշային վճարներ վճարողների ցուցակի ուշ տրամադրումը հիմնականում պայմանավորված է Կոմիտեի էլեկտրոնային համակարգերի, սերվերների և պահոցների ծանրաբեռնվածությամբ: Դրա հետևանքով հնարավոր է համակարգչային ծրագրի աշխատանքի դանդաղեցումը կամ տեխնիկական խափանումը: Բոլոր դեպքերում ձեռնարկվում են հնարավոր գործողություններ խնդիրները հնարավորինս արագ կարգավորվորելու համար (...):

ՀՊ մեկնաբանությունը

Կոմիտեի կողմից ներկայացված արձագանքն ընդունվել է ի գիտություն:

2. ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿ

2.1. Առկա են անհամապատասխանություններ անձնավորված հաշվարկները հարկային մարմին ներկայացնելու համար սահմանված ժամկետները կարգավորող իրավական ակտերով սահմանված պահանջների կատարման նկատմամբ, մասնավորապես.

«Հարկային օրենսգրքի» (այսուհետ՝ Օրենսգրք) 156-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն.

- ֆիզիկական անձինք մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին **հաջորդող հարկային տարվա մայիսի 1-ը ներառյալ** Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում Օրենսգրքի 151-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված եկամուտների մասով եկամտային հարկի տարեկան հաշվարկներ (հայտարարագրեր):

«Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն.

- նոտարները, անհատ ձեռնարկատերերը և ինքնազբաղված անձինք ՀՀ **հարկային օրենսգրքով սահմանված ժամկետում** էլեկտրոնային եղանակով հարկային մարմին են ներկայացնում տարեկան անձնավորված հաշվարկ:

«Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

- անհատ ձեռնարկատերերը, նոտարները, ինքնազբաղված անձինք սույն օրենքի հիման վրա անձնավորված հաշվարկները լիազոր մարմին են ներկայացնում յուրաքանչյուր տարվա համար՝ մինչև **տվյալ տարվան հաջորդող տարվա ապրիլի 20-ը:**

ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի ««Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 1676-Ն որոշման Հավելված 1-ի 18-րդ մասի համաձայն.

- անհատ ձեռնարկատերերը, նոտարը և ինքնազբաղված անձը անձնավորված հաշվարկը ներկայացնում են՝ մինչև **յուրաքանչյուր տարվա ապրիլի 15-ը** (նախորդ տարվա համար):

2.2. Առկա է անհամապատասխանություն եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման գործընթացը կարգավորող իրավական ակտերով սահմանված պահանջների կատարման նկատմամբ, մասնավորապես.

«Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանվում է սույն օրենքում կիրառվող՝ **անհատ ձեռնարկատիրոջ** հասկացությունը.

- 3) անհատ ձեռնարկատեր՝ ըստ «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի, բացառությամբ **«Ինքնազբաղված անձանց հարկային արտոնությունների մասին»** ՀՀ օրենքի N1 հավելվածի ցանկում ընդգրկված գործունեության տեսակներով զբաղվող անհատ ձեռնարկատերերի):

ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի ««Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 1676-Ն որոշման թիվ 1 հավելվածի 2-րդ մասի 8-րդ կետով սահմանվում է հավելվածում կիրառվող՝ **«Ինքնազբաղված անձ»** հասկացությունը.

- 8) **ինքնազբաղված անձ՝** օրենքով չարգելված որևէ գործունեությունից եկամուտ ստացող (բացառությամբ աշխատավարձի և դրան հավասարեցված եկամտի, ձեռնարկատիրական եկամտի և պայմանագրային եկամտի)՝ վարձու աշխատող, անհատ ձեռնարկատեր և նույնպես չհանդիսացող ֆիզիկական անձ (այդ թվում՝ գյուղատնտեսական արտադրանքի իրացումից եկամուտ ստացող գյուղատնտեսական արտադրանք արտադրող, քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա եկամուտ ստացող, **«Ինքնազբաղված անձանց հարկային արտոնությունների մասին»** ՀՀ օրենքի N1 հավելվածի ցանկում ընդգրկված գործունեության տեսակներով զբաղվող), ինչպես նաև **«Ինքնազբաղված անձանց հարկային արտոնությունների մասին»** ՀՀ օրենքի N 1 հավելվածի ցանկում ընդգրկված գործունեության տեսակներով զբաղվող անհատ ձեռնարկատեր և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված՝ բացառապես ընդունեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվող անհատ ձեռնարկատեր):

«Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» ՀՀ օրենքում և ««Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 1676-Ն որոշման թիվ 1 հավելվածում կիրառվող հասկացություններում տրվում է

հղում «**Ինքնազբաղված անձանց հարկային արտոնությունների մասին**» ՀՀ օրենքին, որն ուժը կորցրել է 2020 թվականի հունվարի 1-ից:

Կոմիտեի արձագանքը

Կոմիտեն համակարծիք է անձնավորված հաշվարկների հարկային մարմին ներկայացման համար սահմանված ժամկետները կարգավորող իրավական ակտերում, ինչպես նաև եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման գործընթացը կարգավորող իրավական ակտերում առկա անհամապատասխանությունների հետ: Միաժամանակ, առաջիկայում Կոմիտեն նախատեսում է իրականացնել համապատասխան իրավական ակտերի նախագծերի մշակում:

ՀՊ մեկնաբանությունը

Կոմիտեի կողմից ներկայացված արձագանքն ընդունվել է ի գիտություն:

2.3. Առկա են անհամապատասխանություններ ՀՀ վարչապետի 2024 թվականի մայիսի 6-ի «ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 702-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 411-Լ որոշմամբ սահմանված պահանջի կատարման նկատմամբ, համաձայն որի՝ ՊԵԿ կառուցվածքում կատարված փոփոխությամբ՝ 2024 թվականի հունիսի 1-ից դադարեցվել է տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության գործունեությունը:

ՊԵԿ նախագահի 2013 թվականի մայիսի 7-ի «Էլեկտրոնային տեղեկատվության պահուստային կրկնօրինակման կարգը հաստատելու մասին» թիվ 195-Ա հրամանի հավելվածի 4-րդ կետի համաձայն.

- ՊԵԿ էլեկտրոնային տեղեկատվության պահուստային կրկնօրինակման կարգի պահանջների կատարումն ապահովելու համար պատասխանատու է ՊԵԿ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչությունը (այսուհետ՝ **SS վարչություն**):

ՊԵԿ նախագահի 2021 թվականի հունվարի 8-ի «ՀՀ ՊԵԿ էլեկտրոնային տեղեկատվության պահուստային կրկնօրինակման և արխիվացման կարգը հաստատելու և ՀՀ ֆինանսների նախարարի 2015 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 870-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 2-Ա հրամանի.

- 3-րդ կետի համաձայն՝ ՊԵԿ էլեկտրոնային տեղեկատվության պահուստային կրկնօրինակման և արխիվացման կարգի պահանջների կատարումն ապահովելու համար պատասխանատու է **SS վարչությունը**:

- 4-րդ կետի 8-րդ մասի համաձայն՝ էլեկտրոնային տեղեկատվության պահուստային կրկնօրինակումը և արխիվացումը իրականացվում է Տեղեկատվական համակարգի ադմինիստրատորի (այսուհետ՝ **ՏՀԱ**) կողմից:
- 7-րդ կետի 3-րդ մասի համաձայն՝ պարբերաբար, բայց ոչ ուշ, քան եռամսյակը մեկ անգամ, **ՏՏ վարչությունը** պատահական ընտրանքի եղանակով ստուգում է պահուստային կրկնօրինակների և արխիվների հինգ տոկոսի ամբողջականությունը, որի մասին կազմվում է արձանագրություն՝ Ձև 2-ի համաձայն:

ՊԵԿ նախագահի 2022 թվականի փետրվարի 25-ի «ՀՀ ՊԵԿ տեղեկատվական անվտանգության քաղաքականությունը հաստատելու և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017 թվականի փետրվարի 3-ի թիվ 29-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 208-Ա հրամանի հավելվածով սահմանված ՊԵԿ տեղեկատվական անվտանգության քաղաքականության.

- 2-րդ մասի համաձայն՝ Տեղեկատվական համակարգի ադմինիստրատորը - **ՏՏ վարչության** աշխատակից(ներ) է, որը նշանակվում է **ՏՏ վարչության** պետի կողմից:
- 11-րդ մասի 39-րդ կետի համաձայն՝ Տեղեկատվության մշակման միջոցների օգտագործման թույլատվությունը կազմակերպվում է հետևյալ կերպ՝ 1) ՊԵԿ տեղեկատվության մշակման ընդհանուր և առանձնացված համակարգերը վերահսկվում են **ՏՏ վարչության** կողմից:

Կոմիտեի արձագանքը

Կոմիտեն, Կոմիտեի նախագահի 2013 թվականի մայիսի 7-ի թիվ 195-Ա հրամանի, 2021 թվականի հունվարի 8-ի թիվ 2-Ա հրամանի և 2022 թվականի փետրվարի 25-ի թիվ 208-Ա հրամաններում առկա անհամապատասխանությունների հետ կապված հայտնում է, որ մշակվել է և պատրաստ է շրջանառության Կոմիտեի նախագահի հրամանի նախագիծ, որտեղ վերը նշված հրամաններով սահմանված՝ որոշ գործողությունների պատասխանատվությունը Կոմիտեի տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության փոխարեն դրվում է «Ջի Սոլյուշնս» ՊՈԱԿ-ի վրա:

ՀՊ մեկնաբանությունը

Կոմիտեի կողմից ներկայացված արձագանքն ընդունվել է ի գիտություն:

VII. ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐԸ

1. 1102-12005 «ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ՄԱՍՆԱԿՑԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԻՆ» ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

«1102-12005 - Կուտակային հատկացումներ մասնակցի կենսաթոշակային հաշվին» միջոցառման շրջանակներում 2024 թվականի տարեկան պլանով Կոմիտեին նախատեսվել է հատկացնել 152,266,800.0 հազ. դրամ, որն ավելացվել է 29,813,907.00 հազ. դրամով և ճշտված պլանը կազմել է 182,080,707.0 հազ. դրամ: Դրամարկղային և փաստացի ծախսերը կազմել են 181,945,477.03 հազ. դրամ՝ ճշտված պլանի 99.93%-ը:

«Client-Treasury» համակարգից ստացված տվյալների համաձայն՝ ՀՀ Ֆինանսների նախարարության գանձապետական «26000000013» հաշվեհամարից կուտակային հատկացման ՊԵԿ «900011000545» գանձապետական հաշվեհամարին 2024 թվականի ընթացքում փոխանցվել է 182,080,706.6 հազ. դրամ: Սոցիալական վճարի բաղադրիչի վերաբերյալ «Client-Treasury» համակարգից ստացված տվյալների համաձայն՝ «900008000490» միասնական հաշվին սոցիալական վճարի հարկային պարտավորությունների մարման նպատակով կատարված փոխանցումներն ուղղվում են սոցիալական վճարների սպասարկման և հաշվառման նպատակով գործող՝ Հարկային մարմնի «900005000188»⁵ և «900005000170»⁶ հաշվեհամարներին, որոնք գործում են սոցիալական վճարների սպասարկման և հաշվառման նպատակով: «900005000188» հաշվեհամարից «26000000013» հաշվեհամարին 2024 թվականի ընթացքում փոխանցվել է 2,025,552.4 հազ. դրամ սոցիալական վճար:

Կուտակային հատկացման ՊԵԿ «900011000545» գանձապետական հաշվեհամարին 2024 թվականի ընթացքում «26000000013» հաշվից փոխանցված 182,080,706.6 հազ. դրամ գումարից 181,945,477.03 հազ. դրամը⁷ փոխանցվել է Մասնակիցների ռեեստրը վարողի⁸ Կենտրոնական Բանկում բացված «103002008649» հաշվին:

⁵ Անհատ ձեռնարկատերերի, նոտարների և ինքնազբաղվաչների կողմից վճարվող սոցիալական վճարների սպասարկման և հաշվառման հաշվեհամար:

⁶ Վարձու աշխատողների և հարկային գործակալների կողմից վճարվող սոցիալական վճարների սպասարկման և հաշվառման հաշվեհամար:

⁷ Վերջինս ձևավորվել է 900011000545 և 103002008649 հաշիվների միջև մուտքերի և ելքերի տարբերության հաշվին, որպես զուտ հոսք:

⁸ Հիմք՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք. Մասնակիցների ռեեստրը վարող՝ իրավաբանական անձ, որը ՀՀ կառավարության հետ կնքված պայմանագրի հիման վրա վարում է մասնակիցների ռեեստրը, ինչպես նաև իրականացնում է սույն օրենքով և ՀՀ կառավարության հետ կնքված պայմանագրով նախատեսված այլ գործառնություններ: Մասնակիցների ռեեստր՝ մասնակիցների

Կոմիտեի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ միջոցառման շրջանակներում իրականացվող գործընթացները հիմնականում կատարվում են ինքնաշխատ համակարգերի կիրառմամբ՝ նվազագույնի հասցնելով մարդկային սխալի գործոնով պայմանավորված ռիսկերը: Հաշվեքննության ընթացքում կատարված հսկողական թեստի շրջանակներում իրականացվել է նաև դիտարկման ընթացակարգ՝ կամայական ընտրված կուտակային կենսաթոշակի շահառուի մասով՝ Կոմիտեի կողմից իրականացվող գործառույթների շրջանակներում կիրառվող ինքնաշխատ հսկողական մեխանիզմների և ծրագրերի աշխատանքի հավաստիացման նպատակով, որի արդյունքում ստացվել են համապատասխան հաստատումներ, որ կուտակային հատկացման գումարի ձևավորման և փոխանցման ինքնաշխատ համակարգի կիրառությամբ նվազագույնի են հասցված հնարավոր սխալների հավանականությունը և մարդկային սխալի գործոնով պայմանավորված ռիսկերը:

Հաշվեքննության շրջանակներում Կոմիտեի գործառույթների իրականացման նպատակով ներդրված ինքնաշխատ (ավտոմատացված) համակարգերի հաշվեքննություն/SS աուդիտ (գործող իրավակարգավորումներին, համակարգերի կառավարման, դրանց ռիսկերի մեղմման, կիբեռանվտանգության ժամանակակից ստանդարտներով պահանջվող չափանիշներին համապատասխանության գնահատում) չի իրականացվել:

Կոմիտեի արձագանքը

Կոմիտեն հաշվեքննողի կողմից ներկայացված 1102-12005 «Կուտակային հատկացումներ մասնակցի կենսաթոշակային հաշվին» միջոցառման վերաբերյալ նկատառումներ չունի: Ինչ վերաբերում է վերջին պարբերությամբ նշված արձանագրմանը, ապա Կոմիտեն հայտնում է, որ էլեկտրոնային համակարգերի աուդիտի նպատակով Հայաստանում Մեծ Բրիտանիայի դեսպանատան աջակցությամբ, ս.թ. մարտի 10-ից Toro Solutions կազմակերպության կողմից իրականացվում է կիբեռանվտանգության և խոցելիության ստուգում: Անցած ժամանակահատվածում ներկայացվել են միջանկյալ հաշվետվություններ: Վերջնական հաշվետվությունը կներկայացվի ս.թ. մայիսի 5-ին, իսկ մայիսի 7-8 - ին կազմակերպության կողմից կանցկացվի կիբեռանվտանգությանը վերաբերող ուսուցում Կոմիտեի աշխատակիցների համար:

և նրանց անունով բացված կենսաթոշակային հաշիվներում հաշվառվող պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի փայերի վերաբերյալ տվյալների միասնական համակարգ:

2. 1205-12009 «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄ» ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

«1205-12009 - Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցում» միջոցառման շրջանակներում 2024 թվականի տարեկան պլանով Կոմիտեին նախատեսվել է հատկացնել 51,300,000.0 հազ. դրամ, որը նվազեցվել է 5,603,493.80 հազ. դրամով և ճշտված պլանը կազմել է 45,696,506.1 հազ. դրամ: Դրամարկղային և փաստացի ծախսերը կազմել են 45,696,506.1 հազարական դրամ՝ ճշտված պլանի 100%-ը:

«Client-Treasury» համակարգից ստացված տվյալների համաձայն՝ դրոշմանիշային վճարների նպատակով բացված գանձապետական «900005001186» և «900005001327» հաշվեհամարներին 2024 թվականի ընթացքում փոխանցվել է 47,874,484.5 հազ. դրամ, մինչդեռ նույն համակարգից 8210 հաշվետվության ձևաչափով ներբեռնված՝ ՀՀ պետական բյուջեի կատարման մասին տեղեկանքում 2024 թվականին դրոշմանիշային վճարների գումարը կազմել է՝ 47,671,626.5 հազ. դրամ: Տարբերությունը կազմում է 202,858.0 հազ. դրամ:

Գանձապետական հաշվեհամարներին 2024 թվականի ընթացքում փոխանցված և Հիմնադրամի հաշվեհամարներին փոխանցված գումարների տարբերությունը կազմել է 2,177,978.4 հազ. դրամ⁹: Կոմիտեից ստացված տեղեկատվության համաձայն՝ նույն թվականին գանձապետական

⁹ «Հարկային օրենսգրքի» 16-րդ հոդվածի համաձայն՝ հարկային մարմինը.

1) յուրաքանչյուր հարկային գործակալի կողմից եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկի ներկայացման և դրա հիման վրա դրոշմանիշային վճարի ամբողջ գումարի վճարման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում Հիմնադրամ է փոխանցում տվյալ հարկային գործակալի այն աշխատողների ցուցակը, որոնց համար տվյալ հաշվետու ժամանակաշրջանում կատարվել են դրոշմանիշային վճարներ.

2) յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար դրոշմանիշային վճարներ ինքնուրույն վճարողների համար սույն օրենքով սահմանված դրոշմանիշային վճար վճարելու վերջնաժամկետից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, Հիմնադրամ է փոխանցում տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար դրոշմանիշային վճար ինքնուրույն վճարողների ցուցակը, որոնք տվյալ հաշվետու ժամանակաշրջանում ամբողջությամբ կատարել են դրոշմանիշային վճարներ.

3) դրոշմանիշային վճարներ կատարող անձանց կողմից տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար դրոշմանիշային վճարի ամբողջ գումարը վճարելուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, ֆինանսների ոլորտում Կառավարության լիազորված մարմին է ներկայացնում տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար փոխանցման հանձնարարական՝ սույն կետում նշված անձանց վճարած դրոշմանիշային վճարի գումարներից Հիմնադրամ գումար փոխանցելու վերաբերյալ՝ նշելով փոխանցման ենթակա գումարը:

հաշվեհամարներին փոխանցված դրոշմանիշային վճարի պարտավորություններից ավելի վճարված գումարների վերադարձը կազմել է 292,755.3 հազ. դրամ:

3. 1239-11001 «ՀԻՊՈԹԵԲԱՅԻՆ ՎԱՐԿԻ ՎՃԱՐՎԱԾ ՏՈԿՈՍՆԵՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁ» ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

«1239-11001 - Հիպոթեքային վարկի վճարված տոկոսների գումարների վերադարձ» միջոցառման շրջանակներում 2024 թվականի տարեկան պլանով Կոմիտեին նախատեսվել է հատկացնել 72,000,000.0 հազ. դրամ, որը նվազեցվել է 3,411,480.10 հազ. դրամով և ճշտված պլանը կազմել է 68,588,519.90 հազ. դրամ: Դրամարկղային և փաստացի ծախսերը կազմել են 68,588,519.86 հազարական դրամ՝ ճշտված պլանի 100%-ը: Դեբիտորական և կրեդիտորական պարտքեր տարեկան և տարեվերջին առկա չեն եղել:

Եկամտային հարկի վերադարձից օգտվելու իրավունքի հաստատման հայտերի մուտքագրման, հաստատման կամ մերժման գործընթացների շրջանակներում, հայտը ներկայացնելու օրվան հաջորդող 15 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան սպասարկման բաժնի կողմից համապատասխան ուսումնասիրությունների¹⁰ արդյունքում կատարվում է հայտի հաստատում կամ մերժում: Հաստատման դեպքում վարկառուն տեղեկացվում է նաև եկամտային հարկի վերադարձի դիմումն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Գործընթացում մարդկային սխալի գործոնով պայմանավորված ռիսկեր հիմնականում առկա են հայտերի ընդունման փուլում, երբ հայտատուն ներկայացնում է հայտին կից փաստաթղթեր, որոնց ամբողջականությունը և համապատասխանությունը ստուգվում է Կոմիտեի սպասարկման վարչության տարածքային բաժինների կողմից՝ կատարելով ներկայացվող փաստաթղթերի դիտարկում, ինչպես նաև համապատասխան համադրումներ Կադաստրի պետական կոմիտեից ստացված տեղեկատվության հետ: Օրենսդրական պահանջներին համապատասխանության դեպքում հայտը մուտքագրվում է համակարգ:

Եկամտային հարկի վերադարձից օգտվելու իրավունքի հաստատման հայտի ստացման ժամանակ ստացականի տրամադրում չի իրականացվում, ինչի հետևանքով հնարավորություն չի տրվում գնահատել՝ արդյոք համապատասխան աշխատակիցների կողմից հայտը մուտքագրվել է համակարգ հայտի ստացման օրը,

¹⁰ Անհրաժեշտության դեպքում հայտերն ուսումնասիրվում են նաև ՊԵԿ իրավաբանական վարչության կողմից:

թե՛ ոչ: Հարկ է նշել, որ ստացականի տրամադրման պահանջ ներքին իրավական ակտերով նախատեսված չէ:

Վարկառուի կողմից՝ Անհատական հաշիվների տեղեկատվական պորտալ համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով հարկային մարմին ներկայացվող՝ հիպոթեքային վարկի վճարած տոկոսների հետվերադարձի դիմումի մեջ ինքնաշխատ եղանակով լրացվում են *վարկառուի անունը, ազգանունը, ՀԾՀ-ն, անհատ ձեռնարկատեր /նոտար/ վարկառուի անունը, ազգանունը, ՀՎՀՀ-ն, ձեռք բերվող /կառուցվող/ անշարժ գույքի հասցեն, վարկային պայմանագրի համարը և ամսաթիվը, հաշվարկված եկամտային հարկի մասով վճարված գումարը, հիպոթեքային վարկի վճարված տոկոսների գումարը, փաստացի վերադարձվող գումարը, ինչպես նաև օրենդորությամբ սահմանված այլ տեղեկատվություն:* **Համակարգի կողմից ինքնաշխատ եղանակով կատարվում է լրացված տվյալների համադրում**, որից հետո ընդունվում է դիմումը և ապահովվում է հետվերադարձը: Դիմումը մերժվում է լրացված տվյալներում որևէ սխալի առկայության, հաշվետու ժամանակահատվածի եկամտային հարկի պարտավորության կատարված չլինելու և այլ դեպքերում¹¹:

Ֆիզիկական անձին որևէ հիմքով նախորդ հաշվետու ժամանակահատվածների համար պակաս կամ ավելի վերադարձված գումարների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու դեպքում, Համակարգի կողմից յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 1-ին **ինքնաշխատ եղանակով գեներացվում է ծանուցում**, որով ֆիզիկական անձին տեղեկացվում է նոր դիմում ներկայացնելու դեպքում այդ գումարների վերադարձման հնարավորության կամ ավել վերադարձված գումարը հետ գանձելու վերաբերյալ:

Հիպոթեքային վարկի վճարած տոկոսների հետ վերադարձի գործընթացն առավելապես իրականացվում է համապատասխան ծրագրային ապահովմամբ՝ ինքնաշխատ եղանակով: Համակարգում գեներացվում են հետ վերադարձված գումարները, տարբեր պատճառներով ավել կամ պակաս վճարված լինելու դեպքերում կատարվում են վճարումների ճշգրտումներ: Արդյունքում ֆինանսական հաշվետվություններով սահմանված կատարողական ցուցանիշները (ֆինանսավորում, դրամարկղային ծախս, փաստացի ծախս, դեբիտորական և կրեդիտորական պարտքեր) ձևավորվում են գործող համակարգի տվյալներից: **Դիմումների ընդունման, հաստատման և հետվերադարձի գործընթացները գործնականում տեղի են ունենում միաժամանակ՝ համակարգի կողմից ինքնաշխատ եղանակով**, հետևաբար՝ ֆինանսավորման, դրամարկղային ծախսի և

¹¹ Մերժման դեպքերը նկարագրված են ՊԵԿ նախագահի 2021 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 1274-Լ հրամանի հավելված 3-ով հաստատված կարգի 14-րդ կետով:

փաստացի ծախսի ցուցանիշներն իրար հավասար են, իսկ դեբիտորական և կրեդիտորական պարտքեր չեն ձևավորվել:

Միջոցառման շրջանակներում Կոմիտեի կողմից իրականացվող գործառույթների զգալի մասը, բացառությամբ հայտերի ընդունման գործընթացի, իրականացվում է ինքնաշխատ համակարգերի կիրառմամբ՝ նվազեցնելով մարդկային սխալի գործոնով պայմանավորված ռիսկերը:

Հաշվեքննության շրջանակներում Կոմիտեի գործառույթների իրականացման նպատակով ներդրված ինքնաշխատ (ավտոմատացված) համակարգերի հաշվեքննություն/SS աուդիտ (գործող իրավակարգավորումներին, համակարգերի կառավարման, դրանց ռիսկերի մեղմման, կիրառանվտանգության ժամանակակից ստանդարտներով պահանջվող չափանիշներին համապատասխանության գնահատում) չի իրականացվել:

Կոմիտեի արձագանքը

Արձանագրումների վերաբերյալ Կոմիտեն առարկություններ չունի: Էլեկտրոնային համակարգերի աուդիտի նպատակով Հայաստանում Մեծ Բրիտանիայի դեսպանատան աջակցությամբ, ս.թ. մարտի 10-ից Toro Solutions կազմակերպության կողմից իրականացվում է կիրառանվտանգության և խոցելիության ստուգում: Անցած ժամանակահատվածում ներկայացվել են միջանկյալ հաշվետվություններ: Վերջնական հաշվետվությունը կներկայացվի ս.թ. մայիսի 5-ին, իսկ մայիսի 7-8 - ին կազմակերպության կողմից կանցկացվի կիրառանվտանգությանը վերաբերող ուսուցում Կոմիտեի աշխատակիցների համար:

4. ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿ

ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի եկամուտները կազմել են 2,573,484,477.49 հազ. դրամ, որի 89.78%-ը կազմել են հարկային եկամուտները, իսկ դրա 28.14%-ը կամ 650,077,932.45 հազ. դրամը՝ եկամտային հարկը:

Հարկային մուտքերի ձևավորման գործընթացները Կոմիտեի կողմից իրականացվում են ինքնաշխատ համակարգերի կիրառմամբ՝ նվազեցնելով մարդկային սխալի գործոնով պայմանավորված ռիսկերը: Հարկ վճարողների կողմից հարկային հաշվարկները, հաշվետվությունները և մաքսային հայտարարագրերը նույնպես ներկայացվում են Էլեկտրոնային ավտոմատացված համակարգերի միջոցով:

Հաշվեքննության շրջանակներում Կոմիտեի գործառույթների իրականացման նպատակով ներդրված ինքնաշխատ (ավտոմատացված) համակարգերի հաշվեքննություն/SS աուդիտ (գործող իրավակարգավորումներին, համակարգերի կառավարման, դրանց ռիսկերի մեղմման, կիրառանվտանգության ժամանակակից ստանդարտներով պահանջվող չափանիշներին համապատասխանության գնահատում) չի իրականացվել:

Կոմիտեի արձագանքը

Արձանագրումների վերաբերյալ Կոմիտեն առարկություններ չունի: Էլեկտրոնային համակարգերի աուդիտի նպատակով Հայաստանում Մեծ Բրիտանիայի դեսպանատան աջակցությամբ, ս.թ. մարտի 10-ից Toro Solutions կազմակերպության կողմից իրականացվում է կիրառանվտանգության և խոցելիության ստուգում: Անցած ժամանակահատվածում ներկայացվել են միջանկյալ հաշվետվություններ: Վերջնական հաշվետվությունը կներկայացվի ս.թ. մայիսի 5-ին, իսկ մայիսի 7-8 - ին կազմակերպության կողմից կանցկացվի կիրառանվտանգությանը վերաբերող ուսուցում Կոմիտեի աշխատակիցների համար:

4.1. Եկամտային հարկի հաշվառման գործընթացը

ՀՀ արդարադատության նախարարության Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում (այսուհետ՝ Պետական ռեգիստրի գործակալություն) պետական գրանցում (հաշվառում) ստացող կազմակերպությունները և պետական հաշվառում ստացող անհատ ձեռնարկատերը ՀՎՀՀ-ն ստանում են պետական ռեգիստրի գործակալության միջոցով¹²: ՀՀ կենտրոնական բանկի կողմից պետական գրանցում (հաշվառում) ստացող կազմակերպությունները ՀՎՀՀ-ն ստանում են ՀՀ կենտրոնական բանկի միջոցով՝ ՀՀ կենտրոնական բանկի և հարկային մարմնի համատեղ հրամանով սահմանված կարգով¹³:

4.1.1. Առկա է անհամապատասխանություն ՀՀ կենտրոնական բանկի կողմից պետական գրանցում (հաշվառում) ստացող կազմակերպությունների՝ ՀՎՀՀ-ի ստացման գործընթացը կարգավորող իրավական ակտերում՝, մասնավորապես.

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի՝ 2011 թվականի ապրիլի 18-ի «ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցում ստացած կազմակերպությունների գրանցման մասին

¹² Հիմք՝ «Հարկային օրենսգրքի» 288-րդ հոդվածի 1-ին մաս:

¹³ Հիմք՝ «Հարկային օրենսգրքի» 288-րդ հոդվածի 2-րդ մաս:

տեղեկությունները ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին տրամադրելու կարգը սահմանելու մասին» թիվ 727-Ն հրամանի և ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի ապրիլի 12-ի «ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցում ստացած կազմակերպությունների գրանցման մասին տեղեկությունները ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին տրամադրելու կարգը սահմանելու մասին» թիվ 96-Ն որոշման հիմքում նշված է **«Կազմակերպություններին և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման վերցնելու և հարկային հաշվառումից հանելու մասին» ՀՀ օրենքը, սակայն վերջինս ուժը կորցրել է 2018 թվականի հունվարի 1-ից:**

Պետական ռեգիստրի գործակալությունը համապատասխան տվյալները մուտքագրում է միասնական թվային միջավայր, որին հասանելիություն ունի նաև հարկային մարմինը, որը ստանում է տեղեկությունները կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի պետական գրանցման (հաշվառման) ընթացքում առցանց ռեժիմով անմիջապես՝ պետական գրանցման (հաշվառման) պահին: Տեղեկություններն ստացվելուց հետո հարկային մարմինը պետական ռեգիստրի գործակալությանը տրամադրում է գրանցվող (հաշվառվող) կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) ՀՎՀՀ-ն և հաշվառման վայրի հարկային մարմնի անվանումը:

Հարկ վճարողների հաշվառման գործընթացի շրջանակներում Կոմիտեի կողմից իրականացվող գործառույթները, ինչպես նաև պետական գերատեսչությունների միջև տվյալների փոխանակումն իրականացվում է ինքնաշխատ համակարգի կիրառմամբ՝ նվազագույնի հասցնելով մարդկային սխալի գործոնով պայմանավորված ռիսկերը:

Հարկ վճարողների վերաբերյալ բոլոր տվյալները հաշվառվում են Կոմիտեի միասնական շտեմարանում: Յուրաքանչյուր հարկ վճարող ունի անհատական մուտքի հնարավորություն Կոմիտեի «file-online taxservice» համակարգ (այսուհետ՝ Համակարգ), որի միջոցով հնարավորություն ունի իրական ժամանակում առցանց եղանակով դիտելու իր անձնական հաշվի քարտը, արտատպել իր անձնական հաշվի քաղվածքը¹⁴, ստեղծել և հանձնել հարկային հաշվարկներ և այլն:

Հարկ վճարողների կողմից եկամտային հարկի և սոցիալական վճարի հարկային հաշվարկը ձևավորելու ընթացքում Համակարգն **ինքնաշխատ եղանակով գրանցման հայտերում առկա տվյալներից արտածում է տվյալ**

¹⁴ Քաղվածքում նշված տեղեկատվությունը համարվում է հարկային մարմնի կողմից հաստատված տեղեկատվություն:

հաշվետու ժամանակաշրջանում գրանցված բոլոր աշխատակիցների տվյալները՝ նվազագույնի հասցնելով մարդկային սխալի գործոնով պայմանավորված ռիսկերը: Ինքնաշխատ լրացված տվյալներում համակարգը հարկ վճարողին թույլ չի տալիս փոփոխություններ կատարել, իսկ լրացված տվյալներում անճշտություններ հայտնաբերելու դեպքում այդ մասին համակարգը ծանուցում է հաշվարկը ներկայացնողին:

Եկամուտների վերաբերյալ տվյալները, աշխատաժամանակի տևողությունը լրացվում են հարկ վճարողի կողմից: **Համակարգը չունի ինքնաշխատ գործիքակազմ** «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ նվազագույն ամսական աշխատավարձի, ինչպես նաև գործավարձով կամ ժամավճարով վարձատրվող աշխատողների համար ժամային տարիֆային դրույքի **նվազագույն չափից պակաս մուտքագրվող տվյալների ստուգման համար:**

Հարկային հաշվարկում անճշտությունների բացակայության դեպքում համակարգն **ինքնաշխատ եղանակով ձևավորվում է համապատասխան էլեկտրոնային փաստաթուղթ՝** թվային մշակման հնարավորությամբ (machine-readable) PDF ֆորմատով, որի վրա **ինքնաշխատ եղանակով դրվում է հարկային մարմնի էլեկտրոնային ստորագրությունը՝** փաստաթղթին տալով եզակի համար: Հաշվարկը ներկայացնողը Համակարգից ներբեռնում է էլեկտրոնային փաստաթուղթը, փաստաթղթի վրա դնում է իր էլեկտրոնային ստորագրությունը և էլեկտրոնային փաստաթուղթը հետ է բեռնում Համակարգ: Համակարգն **ինքնաշխատ եղանակով ստուգում է ներկայացված փաստաթղթի և նրա վրա առկա էլեկտրոնային ստորագրությունների վավերականությունը** և ընդունում է հաշվարկը կամ մերժում է հաշվարկն ընդունելը: Համակարգը ինքնաշխատ եղանակով մերժում է հաշվարկն ընդունելը, եթե ներկայացված փաստաթուղթը կամ նրա վրա առկա էլեկտրոնային ստորագրությունները վավերական չեն՝ մերժման պատճառների մասին ծանուցելով հաշվարկը ներկայացնողին: Եթե ներկայացված փաստաթուղթը կամ նրա վրա առկա էլեկտրոնային ստորագրությունները վավերական են, Համակարգն ինքնաշխատ եղանակով գրանցում է ներկայացված փաստաթուղթը՝ նրան հատկացնելով հարկային մարմնում փաստաթղթի գրանցման համար և **հաշվարկը ներկայացնողին ծանուցում է հաշվարկն ընդունելու մասին,** որով հավաստվում է հարկային հաշվարկն ընդունելու փաստը և ամսաթիվը: Էլեկտրոնային ծանուցումն արտացոլվում է հաշվետվությունները ներկայացնելու էլեկտրոնային Համակարգի համապատասխան բաժնում:

Հարկ վճարողն արդեն իսկ ներկայացված հաշվարկներում չի կարող կատարել փոփոխություններ: Տվյալներում փոփոխություններ կատարելու համար հարկ վճարողը ներկայացնում է ճշտված հարկային հաշվարկ, որն ինքնաշխատ եղանակով ստանում է «Ընթացիկ» կարգավիճակ: Հարկ վճարողի կողմից յուրաքանչյուր

ճշտված հաշվարկ ներկայացնելուց հետո անձնական հաշվի քարտերում **ինքնաշխատ եղանակով տեղի է ունենում հարկային պարտավորությունների վերահաշվարկ** և հարկային պարտավորությունների հաշվարկման համար հիմք է հանդիսանում որևէ ժամանակաշրջանին վերաբերող ժամանակագրական առումով ամենավերջինը ներկայացված հարկային հաշվարկը: Բոլոր հաշվարկները պահպանվում են Կոմիտեի էլեկտրոնային շտեմարանում, որոնց համար **ժամկետային կամ ծավալային սահմանափակում առկա չէ:**

Հարկ վճարողների կողմից եկամտային հարկի և սոցիալական վճարի հարկային հաշվարկները ձևավորելու, դրանք լրացնելու, էլեկտրոնային ստորագրությամբ ներկայացված փաստաթղթերի վավերականությունը ստուգելու, հարկային հաշվարկն ընդունելու կամ մերժելու և դրանից հետո անձնական հաշվի քարտերում հարկային պարտավորությունների հաշվարկման գործընթացներն իրականացվում են ինքնաշխատ համակարգի կիրառմամբ, որի միջոցով մարդկային սխալի գործոնով պայմանավորված ռիսկերը հասցվում են նվազագույնի: Նշված գործընթացներն իրականացվում են գործող իրավակարգավորումներին համապատասխան:

4.2. Եկամտային հարկի հավաքագրման գործընթացը

Հարկային հաշվարկով առաջացած հարկային պարտավորությունները ձևավորվում են հարկ վճարողների կողմից հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված հարկային հաշվարկներին հաջորդող օրը, սակայն **ներկայացման օրվա ամսաթվի գրանցմամբ**¹⁵: Պարտավորության ձևավորումը կատարվում է ինքնաշխատ համակարգի միջոցով, որը տվյալների թարմացում չի իրականացնում մինչև տվյալ օրվա ավարտը: Համակարգն, այնուհետև յուրաքանչյուր օրվա ավարտից հետո հարկ վճարողների կողմից ներկայացված հարկային հաշվարկների հիման վրա **ինքնաշխատ եղանակով կատարում է հարկային պարտավորությունների վերահաշվարկ** և ձևավորում է դրանց թարմացված տարբերակը, որն ինքնաշխատ եղանակով արտացոլվում է հարկ վճարողների անձնական հաշվի քարտերում: Մինչև պարտավորության մարման վերջնաժամկետ հանդիսացող օրվա դրությամբ **ճշտված հարկային հաշվարկի ներկայացման դեպքում ինքնաշխատ կատարվում է հարկային պարտավորության վերահաշվարկ** և նոր պարտավորության չափի ինքնաշխատ արտացոլում համակարգի կողմից: Տվյալների համադրման և հարկային հսկողության

¹⁵ Հիմք՝ «Հարկային օրենսգրքի» 319-րդ հոդված:

գործընթացների համար կիրառվում է նաև երրորդ անձանցից ստացված տեղեկատվության ուսումնասիրություն:

Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի հաշվառումն իրականացվում է ինքնաշխատ համակարգի միջոցով: Հարկ վճարողի կողմից հարկային պարտավորության մարման նպատակով միասնական հաշվին վճարված գումարների հաշվառման օր է համարվում դրանց՝ **միասնական հաշվին մուտքագրման օրը**: Միասնական հաշվին գումարի մուտքագրումն անմիջապես արտացոլվում է հարկ վճարողի անձնական հաշվի քարտում:

Հարկային պարտավորությունները մարվում են միասնական հաշվին առկա գումարներից՝ **ըստ ավելի վաղ առաջացած հարկային պարտավորության հերթականության**: Համակարգը տվյալ գործողությունը **կատարում է ինքնաշխատ՝ միասնական հաշվից կատարելով վճարում**¹⁶ նվազեցնելով անձնական հաշվի քարտում առկա հարկային պարտավորությունը: Եթե միասնական հաշվին մուտքագրված գումարի չափն ամբողջությամբ բավարարում է հարկային պարտավորության մարմանը, ապա կատարվում է պարտավորության ամբողջական մարում, իսկ պակաս լինելու դեպքում՝ մասնակի մարում՝ միասնական հաշվին առկա գումարի մեծության չափով: Միասնական հաշվին մուտք եղած գումարների հաշվառումը կատարվում է հարկ վճարողի կողմից միասնական հաշվին կատարված մուտքագրման օրվա դրությամբ, սակայն պարտավորության մարումը կատարվում է յուրաքանչյուր օրվա ավարտից հետո: Պարտավորության մարման օր է համարվում միասնական հաշվին մուտքագրման օրը:

Եթե հարկ վճարողը ներկայացրել է ճշտված հարկային հաշվարկ, որի արդյունքում առկա հարկային պարտավորության չափը նվազել է, **հարկ վճարողի անձնական հաշվի քարտում համակարգն ինքնաշխատ կատարում է պարտավորության մնացորդի վերահաշվարկ և ավել վճարված գումարն ինքնաշխատ մուտքագրվում է հարկ վճարողի միասնական հաշվին**:

Հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացման դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողի անձնական հաշվի քարտերում **ինքնաշխատ եղանակով հաշվարկվում է տույժ**¹⁶ օրական 0.04 տոկոսի չափով: Սահմանված տույժը կիրառվում է ժամանակին չվճարված հարկի գումարի, հարկային հսկողության արդյունքներով հայտնաբերված (պակաս ցույց տրված) հարկի գումարի նկատմամբ՝ դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 730 օրվա համար¹⁶: Այն դեպքում, երբ հարկ վճարողը սահմանված ժամկետներում կատարում է վճարում, սակայն հետագայում ներկայացնում է ճշտված հարկային հաշվարկ, որտեղ հարկային

¹⁶ Հիմք՝ «Հարկային օրենսգրքի» 401-րդ հոդված:

պարտավորությունն ավելի մեծ է քան նախորդ ներկայացված հաշվարկի դեպքում, ապա **համակարգն ինքնաշխատ հաշվարկվում է նաև տույժ՝ չվճարված ժամանակահատվածի համար**: Հաշվարկված տույժերը նույնպես ինքնաշխատ արտացոլվում են հարկ վճարողի անձնական հաշվի քարտում:

Միասնական հաշվին **փոխանցված միջոցներն ինքնաշխատ դասակարգվում են ըստ առանձին հարկերի տեսակների**¹⁷, որի արդյունքում ձևավորվում է համապատասխան հարկատեսակի գծով մարված պարտավորությանների վերաբերյալ հաշվետվություն:

Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի վարումը, հարկային պարտավորությունների հաշվարկը, կատարված մարումների հաշվառումը, ժամկետանց պարտավորությունների մասով տույժերի և տուգանքների հաշվարկը և դրանց արտացոլումը հարկ վճարողի անձնական հաշվի քարտում կատարվում են ինքնաշխատ համակարգի միջոցով՝ նվազեցնելով մարդկային սխալի գործոնով պայմանավորված ռիսկերը:

Յուրաքանչյուր հարկ վճարողի կողմից վճարված եկամտային հարկի՝ հաշվություններում արտացոլման գործընթացն իրականացվում է ինքնաշխատ համակարգերի կիրառմամբ՝ նվազեցնելով մարդկային սխալի գործոնով պայմանավորված ռիսկերը:

4.3. Եկամտային հարկից ստացվող մուտքերի՝ հաշվետվություններում արտացոլման գործընթացը

Կոմիտեի կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ ամսական տեղեկատվության, Կոմիտեի գործունեության եռամսյակային համառոտագրերի, ինչպես նաև Կոմիտեի գործունեության տարեկան հաշվետվությունը Կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքում հիմնականում հրապարակվել են գործող իրավական ակտերով սահմանված ժամկետների պահպանմամբ:

Հարկային մուտքերի ձևավորման, այդ թվում եկամտային հարկի հաշվառման և հավաքագրման գործընթացները Կոմիտեի կողմից իրականացվում են ինքնաշխատ համակարգերի կիրառմամբ՝ նվազեցնելով մարդկային սխալի գործոնով պայմանավորված ռիսկերը: Հարկ վճարողների կողմից հարկային հաշվարկները, հաշվետվությունները և մաքսային հայտարարագրերը նույնպես ներկայացվում են էլեկտրոնային ավտոմատացված համակարգերի միջոցով:

¹⁷ Յուրաքանչյուր փոխանցման վավերապայմաններում պարտադիր է համապատասխան հարկատեսակի գանձապետական հաշվեհամարի առկայությունը:

Հաշվեքննության շրջանակներում Կոմիտեի գործառույթների իրականացման նպատակով ներդրված ինքնաշխատ (ավտոմատացված) համակարգերի հաշվեքննություն/SS աուդիտ (գործող իրավակարգավորումներին, համակարգերի կառավարման, դրանց ռիսկերի մեղմման, կիրառանվտանգության ժամանակակից ստանդարտներով պահանջվող չափանիշներին համապատասխանության գնահատում) չի իրականացվել:

Կոմիտեի արձագանքը

Կոմիտեն հաշվեքննողի կողմից ներկայացված եկամտային հարկի հաշվառման և եկամտային հարկից ստացվող մուտքերի՝ հաշվետվություններում արտացոլման գործընթացների վերաբերյալ նկատառումներ չունի: Էլեկտրոնային համակարգերի աուդիտի նպատակով Հայաստանում Մեծ Բրիտանիայի դեսպանատան աջակցությամբ, ս.թ. մարտի 10-ից Toro Solutions կազմակերպության կողմից իրականացվում է կիրառանվտանգության և խոցելիության ստուգում: Անցած ժամանակահատվածում ներկայացվել են միջանկյալ հաշվետվություններ: Վերջնական հաշվետվությունը կներկայացվի ս.թ. մայիսի 5-ին, իսկ մայիսի 7-8 - ին կազմակերպության կողմից կանցկացվի կիրառանվտանգությանը վերաբերող ուսուցում Կոմիտեի աշխատակիցների համար:

VIII. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Կոմիտեում 2024 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննության ընթացքում ուսումնասիրվել է «1023-31003 - ՀՀ պետական եկամուտների կոմիտեի շենքային ապահովվածության բարելավում» միջոցառման իրականացման ընթացքը:

ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 5-ի N 621-Ա որոշման համաձայն՝ Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող՝ ՀՀ Կոտայքի մարզի Պոռչյան համայնքի Գևորգ Չաուշի խճուղի թիվ 5 հասցեում գտնվող 19.1 հա ընդհանուր մակերեսով հողամասը և 23,616.9 ք/մ մակերեսով շենքերը և շինությունները (այսուհետ՝ գույք)՝ 07-053-0156-0013 կադաստրային ծածկագրով, 1,384,765,000 դրամ հաշվեկշռային արժեքով, հետ է վերցվել ՀՀ պաշտպանության նախարարությունից և ամրացվել Կոմիտեին: Կոմիտեին հանձնարարվել է նաև՝ իրականացնել նշված գույքի տեխնիկական վիճակի հետազննություն¹⁸:

ՀՀ պաշտպանության նախարարի և Կոմիտեի նախագահի կողմից հաստատված (25.06.2022թ. և 06.07.2022թ.) գույքի հանձնման-ընդունման ակտի համաձայն՝ հանձնման-ընդունման ժամանակ համատեղ իրականացվել է 23,616.9 ք/մ մակերեսով շենքերի և շինությունների ակնադիտական ուսումնասիրություն:

Կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի կողմից 2009 թվականի օգոստոսի 13-ին հաստատվել է պետական գույքի հանձնման-ընդունման աշխատանքները կանոնակարգելու մասին N 74-Ն հրամանը (այսուհետ՝ Հրաման): Հրամանի 3-րդ կետի 1-ին ենթակետով սահմանվել է, որ գույքի արժեքի բացակայության դեպքում գնահատող կազմակերպության (անկախ գնահատողի) կողմից ներկայացված գնահատման եզրակացությամբ (հաշվետվությամբ) նշված արժեքը ներառվում է գույքի հանձնման-ընդունման ակտում որպես գույքի արժեք:

Ի պատասխան 2024 թվականի հուլիսի 19-ի ՊԵԿ թիվ 1/18-2/45214-2024 գրության՝ Պետական գույքի կառավարման կոմիտեի կողմից տեղեկացվել է, որ վերը նշված գույքի քանդման ընթացքում գոյացած մետաղական կոնստրուկցիաների

¹⁸ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 8-ի N 282-Ն հրամանի հավելված 1-ով հաստատվել են բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննության մեթոդական ցուցումները, մասնավորապես, կիրառում են հետազննության երկու ձևեր՝ դիտողական և դիտողագործիքային: Դիտողական հետազննության ժամանակ ի հայտ են բերվում և նշվում են (անհրաժեշտության դեպքում լուսանկարվում են) երևացող թերությունները, դեֆորմացիաները, կոնստրուկցիաների տարրերի չափերի, ձևի ու դիրքի շեղումները, ճաքերի առկայությունն ու տեղաբաշխման բնույթը, ինչպես նաև մեխանիկական, կոռոզիոն, կենսաբանական, այրվածքային և այլ տիպի վնասվածքները: Անհրաժեշտության դեպքում բացվում են կոնստրուկցիաները, ինչպես նաև ժամանակավոր ամրակապվում և ցանկապատվում են վթարային վիճակում գտնվող կոնստրուկցիաները և վտանգավոր տեղամասերը:

շուկայական արժեքի գնահատման աշխատանքներն իրականացնելու նպատակով «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ին տրվել է հանձնարարական:

Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ «ՊԵԿ-ՀՐՄԱՇՁԲ-23/1» պայմանագրի շրջանակներում ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտեի կողմից նախանշած հասցե (ք.Երևան, Էրեբունի, Նուբարաշենի 2) են տեղափոխվել շենքերի քանդման ընթացքում գոյացած մետաղական կոնստրուկցիաները՝ ընդհանուր 103,040 կգ քաշով: Կոմիտեի և ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտեի միջև հանձնման-ընդունման գործընթացն ավարտված չէ՝ հանձնման-ընդունման ակտ կազմված չէ:

Կոմիտեում 2024 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությամբ արձանագրված այլ փաստերը Կոմիտեի կողմից ընդունվել են ի գիտություն:

IX. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեին.

1. Ձեռնարկել միջոցներ՝ «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցում» միջոցառման իրականացման շրջանակներում ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 2-ի ««Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 86-Ն որոշման Հավելված 4-ով սահմանված կարգի՝ 3-րդ, 4-րդ, 4.1-րդ և 8-րդ կետերի պահանջների կատարման նկատմամբ անհամապատասխանությունների վերացման ուղղությամբ:
2. Իրավական ակտերում համապատասխան փոփոխությունների իրականացման ուղղությամբ ձեռնարկել միջոցներ՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի՝ 2011 թվականի ապրիլի 18-ի «ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցում ստացած կազմակերպությունների գրանցման մասին տեղեկությունները ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին տրամադրելու կարգը սահմանելու մասին» թիվ 727-Ն հրամանում և ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի ապրիլի 12-ի «ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցում ստացած կազմակերպությունների գրանցման մասին տեղեկությունները ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին տրամադրելու կարգը սահմանելու մասին» թիվ 96-Ն որոշման մեջ առկա անհամապատասխանությունների վերացման նպատակով:
3. Ձեռնարկել միջոցներ՝ ՊԵԿ նախագահի 2013 թվականի մայիսի 7-ի թիվ 195-Ա, 2021 թվականի հունվարի 8-ի թիվ 2-Ա և 2022 թվականի փետրվարի 25-ի թիվ 208-Ա հրամաններում առկա անհամապատասխանությունների վերացման նպատակով:
4. Իրավական ակտերում համապատասխան փոփոխությունների իրականացման ուղղությամբ ձեռնարկել միջոցներ՝ «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում, ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի ««Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 1676-Ն որոշման թիվ 1 հավելվածի 2-րդ մասի 8-րդ կետում առկա անհամապատասխանությունների վերացման նպատակով:
5. Իրավական ակտերում համապատասխան փոփոխությունների իրականացման ուղղությամբ ձեռնարկել միջոցներ՝ «Հարկային օրենսգրքի» 156-րդ հոդվածի 4-րդ մասում, «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 7-րդ

հողվածի 5-րդ մասում, «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասում և ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի ««Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 1676-Ն որոշման Հավելված 1-ի 18-րդ մասում առկա անհամապատասխանությունների վերացման նպատակով:

6. Ընթացիկ եզրակացությունում ներկայացված վերոնշյալ առաջարկությունների հիման վրա մշակել և հաստատել միջոցառումների ծրագիր, որը կպարունակի յուրաքանչյուր միջոցառման համար պատասխանատու ստորաբաժանում(ներ)ը և միջոցառման կատարման ժամանակացույցը:



Recoverable Signature

Ատրուշդող
ՀԱԿՈԲ ՄԻՀՐԱՆՅԱՆ
1108660142



2025-05-19 16:58:42 GMT+4
Հաստատված է էԼԵԿՏՐՈՆԻԿ Կրթվից



Signed by: MIHRANYAN HAKOB 1108660142

Հակոբ Միհրանյան

Հաշվեքննիչ պալատի անդամ

«29» ապրիլ, 2025 թվական

ՀՀ հաշվեքննիչ պալատ

Մ.Բաղդամյան 19, Երևան

Հայաստանի Հանրապետություն